Ալյումինե փայլաթիթեղի արտադրությունը Հայաստանում

Շուկայի ընդլայնման և շահույթի ավելացման հնարավորություններ

ԸՆՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Այլումինե փայլաթիթեղի արտադրության պատմությունը Հայաստանում

Այլումինե փայլաթիթեղի արտադրությունը Հայաստանում առաջին անգամ շահագործման է հանձնվել 1950 թվականին Խորհրդային Միության տարիներին: Առաջին գործարանը՝ **«Քանաքեռի այլումինի ձուլարանը»,** 1980-ականներին ԽՍՀՄ-ում և Եվրոպայում խոշորագույններից մեկն էր: Խորհրդային Միության փլուզումից հետո գործարանը սեփականաշնորհվեց, և **«Ռուսալ-Արմենալը»** ստանձնեց: Մեր օրերում **«Ռուսալ-Արմենալ»-ը** Հայաստանում այլումինե փայլաթիթեղի արտադրության շուկայի առաջատարն է:

Փաստեր ու թվեր

2022 թվականին Հայաստանից այլումինի և դրանից պատրաստված իրերի արտահանման ծավալը կազմել է շուրջ **142 մլն ԱՄՆ դոլար**: Նույն տարում Հայաստան է ներմուծվել **99 մլն ԱՄՆ դոլարի 35 հազար տոննա** չմշակված այլումին: Հայաստանն արտահանել է **132 մլն ԱՄՆ դոլարի** այլումինե արտադրանք. Նույն տարում Հայաստանն արտահանել է 14 մլն ԱՄՆ դոլարի 6000 տոննա չմշակված այլումին: Այլումինե փայլաթիթեղի արտադրանքի արտահանման աճը 2015 թ. ի վեր կազմել է 7%, իսկ ներմուծմանը՝ 16%: Համաշխարհային մակարդակում նույն միտումն է նկատվում. այլումինե արտադրանքի առևտուրը տարեկան կտրվածքով աճել է միջինը 8,5%-ով 2015 թվականից:

Նպատակ

Հայաստանի այլումինե փայլաթիթեղի շուկան ուղղված է ոչ թե տեղում վերջնական արտադրանքի ստեղծմանը, այլ սահմանափակված է այլումինե փայլաթիթեղի արտադրությամբ և արտահանմամբ:

Սա թողնում է հսկայական չօգտագործված տեղական և համաշխարհային շուկա, որն արժե ուսումնասիրել:

Մեր նպատակն է հետազոտել այլումինե փայլաթիթեղի արտադրության ինչպես տեղական, այնպես էլ համաշխարհային շուկաները ու ուսումնասիրել տեղական արտադրության արժեքային շղթային ինտեգրվելու հնարավորությունները:

Այլումինը որպես ապրանք – սպասվում է գնաճի դանդաղում





2023 թվականի առաջին եռամսյակում այլումինի գները **32%-ով բարձր են եղել 2015-2019 թվականների միջինից**: Այնուամենայնիվ, 2023 թվականի երրորդ եռամսյակում նախորդ եռամսյակի համեմատ գինը **ցածր էր 5%-ով**: Ակնկալվում է, որ **2024թվականին գները կշարունակեն իջնել, իսկ 2025 թվականին կվերականգնվեն՝ աճելով ընդամենը 9%-ով** (Համաշխարհային բանկի կանխատեսում):

Չինաստանն աշխարհում այլումինի խոշորագույն արտադրողն է: Ուստի, շուկայում գների տատանումները պայմանավորված են Չինաստանի մատակարարման ու արտադրական հնարավորություններով:

Այլումինե փայլաթիթեղի համաշխարհային շուկա – պահանջարկն աճում է

Այլումինե արտադրանքի համաշխարհային առևտրի ծավալը, 1000 ԱՄՆ դոլար (բացառությամբ՝ չմշակված այլումինը)



2015 թվականից ի վեր այլումինե արտադրանքի ծավալի միջին տարեկան աճը կազմել է **8.5%: Հետկովիդյան ժամանակահատվածում գրանցվել է զգալի աճ՝ 2021թ. աճը կազմել է 34%:** Հետազոտությունները ցույց են տալիս, որ այլումինի շուկան կշարունակի աճել կայուն տեմպերով, հաշվի առնելով էլեկտրահաղորդման գծերում, **էլեկտրական մեքենաների ու արևային մարտկոցներում դրա օգտագործման աճող պահանջարկը:**

Առաջին 5 ներմուծողներ	Առաջին 5 արտահանողներ
ԱՄՆ	Չինաստան
Գերմանիա	Գերմանիա
Չինաստան	ԱՄՆ
Մեքսիկա	Կանադա
Իտալիա	Ռուսաստան

2022 թվականին այլումինը և դրանից պատրաստված իրերը (ներառյալ չմշակված) 16-րդ ամենաշատ ներմուծվող ապրանքներն են աշխարհում (ընդհանուր ներմուծման 1.1%-ը) և 17-րդ ամենաշատ արտահանվող ապրանքները (ընդհանուր արտահանման 1.1%-ը): Այլումինե փայլաթիթեղը աշխարհում 6-րդ ամենաներմուծվող և 7-րդ ամենաարտահանվող արտադրանքն է (2022թ.՝ այլումինի ընդհանուր առևտրի 20%-ը):

Հայկական ալյումինի շուկա – առկա է աճի միտում

Ալյումինե արտադրանքի արտաքին առևտրաշրջանառություն 1000 ԱՄՆ դոլար (բացառությամբ չմշակված) | Հայաստան



2015 թվականից ի վեր Հայաստանում ալյումինի արտահանման միջին տարեկան աճը կազմել է 7%, իսկ ներմուծմանը՝ 16%: Հետկովիդյան ժամանակահատվածում նկատելի է միայն արտահանման աճ, ինչը կազմել է 24%: 2022թ. ներմուծվել է 35,000 տոննա չմշակված ալյումին (ամբողջությամբ Ռուսաստանից)՝ 99 մլն ԱՄՆ դոլարի: Նույն տարում Հայաստանն արտահանել է 6,000 տոննա **չմշակված ալյումին**՝ 14 մլն ԱՄՆ դոլարի:

Հայաստանից արտահանում, 2022թ. առաջին 5 երկրներ

- Գերմանիա (59 մլն ԱՄՆ դոլար)
- Լեհաստան (19 մլն ԱՄՆ դոլար)
- Իտալիա (12 մլն ԱՄՆ դոլար)
- Նիդերլանդներ (12 մլն ԱՄՆ դոլար)
- Միացյալ Թագավորություն (7 մլն ԱՄՆ դոլար)

Հայաստանի ալյումինի **արտահանման հիմնական գործընկերներից մեկն ԱՄՆ-ն էր:** Սակայն Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցներից հետո Հայաստանը տուժեց և կորցրեց ԱՄՆ-ին որպես ալյումինե արտադրանք ներկրող: 2018-2021 թվականներին ալյումինե արտադրանքի **արտահանման միջին արժեքը ԱՄՆ կազմել է 25 մլն. ԱՄՆ դոլար:** Պատժամիջոցների կիրառումից հետո 2022 թվականին դեպի ԱՄՆ արտահանման ծավալը նվազեց՝ **կազմելով 1 մլն. ԱՄՆ դոլար:**

Հայաստանում ալյումինի պահանջարկը և առաջարկը

Մատակարարող/արտադրող կազմակերպություններ

Ընդամենը **43** կազմակերպություն

Metexim; Edmet: Չմշակված ալյումին

Rusal-Armenal: Ալյումինե փայլաթիթեղ, ալյումինե թաղանթ/թիթեղներ
Գերակշիռ մասն արտահանում է փայլաթիթեղը որպես հումք՝ վերջնական արտադրանք ստանալու համար:

Royal Print; Multi Tabak: Ալյումինե փայլաթիթեղ (բարակ)
Փոքր մասնաբաժին: Հիմնականում արտահանվում է ծխախոտի համար անհրաժեշտ փայլաթիթեղ, որը կարող է (կամ ոչ) թղթապատ և/կամ այլ նյութերով

Ecoville: Ալյումինե ձողեր ու խողովակներ: Արտահանում խիստ փոքր ծավալներով՝ նախատեսված արևային մարտկոցների համար:

Autobody; Rio Motors; Logist Auto; Armtech Auto: Ալյումինե համաձուլվածքների խողովակներ և խողովակներ: Փոքրածավալ, հիմնականում նախատեսված է ավտոպահեստամասեր և աքսեսուարներ ստեղծելու համար:

Պահանջարկ ունեցող կազմակերպություններ

Ընդամենը **517** կազմակերպություն

Սնունդ ու խմիչքներ: Ալյումինե փայլաթիթեղ (բարակ)
Grand Candy: կոնֆետների և շոկոլադե սալիկների փաթեթավորում
Marianna: կաթնամթերքի փաթեթավորում (կաթնային կնիք, յոգուրտի կնիք և այլն)
Royal Armenia: սուճի փաթեթավորում

Շինարարություն: Ալյումինե համաձուլվածքների պրոֆիլներ
Hakhverdyan Shinmontazh: արտաքին ճակատի համար դռների, պատուհանների, կոմպոզիտային պանելների կառուցում:
EuroProfile: դռների,վերելակների, համակարգերի արտադրություն:
AM Group: ալյումինե պատուհանների և դռների արտադրություն, ալյումինե պրոֆիլների և աքսեսուարների մեծածախ առևտուր:

Ծխախոտ: Ալյումինե փայլաթիթեղ (բարակ)
Grand Tobacco, օգտագործվում է ծխախոտի փաթեթավորման ներսում, կարող է պատված լինել թղթով

Դեղագործական: Ալյումինե փայլաթիթեղ
A-Lab pharmaceuticals, Esco-Pharm, Medical Horizon: օգտագործվում է դեղորայքի փաթեթավորման համար (blisterfoil)

«Ռուսալ-Արմենալ» – ալյումինե փայլաթիթեղի արտադրության հայաստանյան շուկայի առաջատար

«Ռուսալ-Արմենալ»-ը Հայաստանում ալյումինե փայլաթիթեղի հիմնական արտադրողն է: Վերջինս ռուսական **«Ռուսալ»** ընկերության դուստր կազմակերպությունն է, որը հանդիսանում է աշխարհում ալյումինի արտադրության խոշորագույն ընկերություններից մեկը **(2022 թվականին համաշխարհային արտադրության 6.2%-ը):** «Ռուսալը» մասնագիտացած է շինարարության, էլեկտրոնիկայի, տրանսպորտի և այլ ոլորտների 700-ից ավելի կիրառություն ունեցող ապրանքների արտադրության մեջ:

“Ռուսալ–Արմենալի” արտադրանքը

Ստորև բերված արտադրանքի ցանկից երևում է, որ «Արմենալը» ալյումինե փայլաթիթեղ է արտադրում այլ բիզնեսի համար՝ դրանից վերջնական արտադրանք ստեղծելու համար: **«Ռուսալ-Արմենալի» հիմնական գործառույթը հենց վերջնական արտադրանքը արտադրելը չէ:**

- Ալյումինե փայլաթիթեղ / արդյունաբերական ժապավեն
- Ալյումինե փայլաթիթեղ փաթեթավորման համար
- Ալյումինե փայլաթիթեղ կենցաղում կիրառման համար
- Ալյումինե փայլաթիթեղ՝ սննդի տարաների արտադրության համար
- Ալյումինե փայլաթիթեղ լամինացիայի համար
- Ալյումինե և ալյումինե համաձուլվածքի շերտեր

Հաստությունը (մմ): 0.007 – 0.2; 0.2 – 1.5; 0.007 - 0.24; 0.007 – 0.025; 0.25 – 8.5; 0.035 – 0.01

Հայաստանում ալյումինե փայլաթիթեղի արժեշղթայի ընդլայնում. ապրանքներ ու ֆիններ

Կան ալյումինե փայլաթիթեղի բազմաթիվ արտադրություններ, որոնք Հայաստանում կարող են ընդլայնվել

Սննդի փաթեթավորում

Շոկոլադե սալիկի փայլաթիթեղ, խորտիկների փաթեթավորում

Առողջապահություն

Բլիստերային փաթեթներ դեղերի համար, ռենտգեն պաշտպանություն

Արդյունաբերական

Ջերմափոխանակիչներ, խողովակների մեկուսացում, կոնդենսատորի փաթաթում

Էլեկտրոնիկա

Էլ. պլատաներ, մարտկոցների փաթեթավորում

Շինարարություն

Գոլորշու մեկուսիչներ, տանիքի մեկուսացում

Ծխախոտի փաթեթ

Ծխախոտի փայլաթիթե փաթեթավորում

Մեր դեպքում մենք կկենտրոնանանք.

Սիգարետի փաթեթավորում

Սննդի փաթեթավորում

Դեղերի փաթեթավորում

Կոնդեսատորի փաթեթավորում

Մանրամասն փաստեր և ապրանքներ

Տվյալները 2022 թվական

Փայլաթիթեղ սիգարետի փաթեթավորման	Հրուշակեղենի փաթեթավորում	Դեղերի փաթեթավորում	Կոնդենսատորի փաթաթում
Հաստություն: 0.006 – 0.007մմ **Ծխախոտի արտադրանքը Հայաստանում՝** 365 մլն ԱՄՆ դոլար	**Հաստություն:** 0.010 – 0.014 մմ **Հրուշակեղենի արտադրանքը Հայաստանում** 96 մլն ԱՄՆ դոլար	**Հաստություն:** 0.025 – 0.028մմ **Դեղագործական արտադրանքը Հայաստանում** 18 մլն ԱՄՆ դոլար.	**Հաստությունը:** 0.005 – 0.01մմ **Կոնդեսատորի արտադրանքը Հայաստանում:** -

Ապրանքների համար մեղեթիթեղի պահանջարկ	HS Ծածկագիր	Արտադրանք	Պահանջարկ Հայաստան	Մատակա–րարում Հայաստանից	Գլոբալ ներմուծում (6-նիշ)
	7607201000 7607111109 7607111901 7607191000	Սիգարետի ու հրուշակեղենի փաթեթավորում, Կոնդեսատորի փաթաթում	$9.7 մլն.	$1 մլն.	$18.5 մլրդ.
	7607199009 7607209000 7607119000 7607199001	Դեղերի փաթեթավորում	$0.7 մլն.	13 մլն.	

Թիրախային երկրներ

(Ապրանքների ներմուծում 6-նիշ)

- Գերմանիա **(1.2 մլրդ $.)**
- Ֆրանսիա **(645 մլն. $)**
- ԱՄԷ **(390 մլն. $)**
- Բելգիա **($353 Mln.)**
- Ռուսաստան **(145 մլն. $)**
- Իրան **(72 մլն. $)**
- Ղազախստան **(19 մլն. $)**
- Վրաստան **(3.5 մլն. $)**
- Բելառուս **(2.5 մլն. $)**
- Ղրղզստան **(2.3 մլն. $)**

Ֆինանսական ցուցանիշների ուսումնասիրություն և ենթադրություններ

Սկզբնական ներդրումներ

Մեքենա–սարքավորումներ
1 արտադրական մեքենայի արժեքը՝ առաքմամբ և տեղադրմամբ
$3.5 մլն.

Տեղադրման ծախսերը
Տեղադրում
Շինարարություն
Դիզայն
$800 հազ

Գործառնական և այլ փոփոխական ծախսեր

	Վաճառքի ծավալի նկատմամբ, տոկոս
Հումք	**25%**
Ընդհանուր ծախսեր և փոփոխական ծախսեր (առաջին 3 տարի)	**60%**
Ընդհանուր ծախսեր և փոփոխական ծախսեր (4-րդ տարի և ավել)	**40%**

Այլ ենթադրություններ

Ձեղչի դրույքաչափ	**14%**
Գնաճ	**4%**
Եկամտահարկ	**20%**
Մեքենաների մաշվածության ժամկետ տարի	**15**
Տեղական պահանջարկի աճ, տարի	**10%**
Համաշխարհային պահանջարկի աճ, տարի	**5%**

Ընդհանուր ներդրումներ **$4.3 Mln.**

Կարողություն, տարի

Քանակ	*Ծավալ*
7200 tons	**$30 Mln.**

Եկամուտների հաշվետվությունը և գործակիցները ցույց են տալիս, որ ներդրումը շահութաբեր է

	Տարի 1	Տարի 2	Տարի 3	Տարի 4	Տարի 5
Իրացում (տեղական ու համաշխարհային)	$ 2,860,000	$ 4,404,400	$ 6,921,200	$ 13,668,666	$ 18,616,054
Հումք	$ 715,000	$ 1,101,100	$ 1,730,300	$ 3,417,166	$ 4,654,013
Ընդհանուր ծախսեր ու այլն	$ 1,716,000	$ 2,642,640	$ 4,152,720	$ 5,467,466	$ 7,446,421
Մաշվածություն	$ 233,333	$ 233,333	$ 233,333	$ 233,333	$ 233,333
Վարձակալություն	$ 250,000	$ 250,000	$ 250,000	$ 250,000	$ 250,000
Նախնական տեղադրում	$ 800,000	-	-	-	-
Շահույթ մինչ հարկումը	$ (854,333)	$ 177,326	$ 554,846	$ 4,300,699	$ 6,032,285
Զուտ շահույթ	**($854,333)**	**$141,861**	**$443,877**	**$3,440,559**	**$4,825,828**

Շահութաբերության ցուցանիշներ

PP *Տարի*	**4.97**
ROI *(5 տարվա միջին)*	**37%**
NPV *(5 տարի)*	**$1.2 մլն.**
IRR *(5 տարի)*	**22%**

Հայաստանում գները մրցունակ են ներմուծման ցուցանիշների հետ

Ներմուծում | 2022	
Ընդհանուր արժեք	$10,400,000
Ընդհանուր ծավալ (տոննա)	2003
1 տոննայի գինը	**$5,200**

Հայաստանի արտադրանք| առավելագույն կարողություն	
Ընդհանուր ծախսեր	$30,700,000
Ընդհանուր ծավալ (տոննա)	7200
1 տոննայի ծախս	**$4,263**

Եթե հայկական արտադրության ինքնարժեքի հաշվարկում մուտքագրենք 20% սխալի մարժա, ապա արտադրության գինը Հայաստանում կմնա մրցունակ՝ **5100 ԱՄՆ դոլար մեկ տոննայի դիմաց:**

Եթե ՀՀ կառավարությունը շուկայում այլումինե փայլաթիթեղ արտադրող նոր արտադրողների համար հարկային արտոնություններ սահմանի, մեկ տոննայի գինը կնվազի **առնվազն 100 ԱՄՆ դոլարով մեկ տոննայի դիմաց:.**

Հայկական արտադրության ծախսերը հիմնված են.

- Մեքենաների տարեկան առավելագույն հզորությունը՝ 7200 տոննա
- Փոփոխական ծախսեր առավելագույն արտադ–ության դեպքում
- Սկզբնական ներդրում. մեքենաների և սկզբնական տեղադրման ծախսերը
- Կառավարությանը վճարված հարկը

Ինչու՞ պետք է ընդլայնենք ալյումինե փայլաթիթեղի արտադրությունը Հայաստանում:

Շահութաբերություն

Մեր շահութաբերության ուսումնասիրությունն ապացուցեց, որ նախագիծը շահավետ կլինի ներդրողի համար

Մրցունակություն

Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եթե Հայաստանում արտադրեինք ալյումինե փայլաթիթեղ, ապա գնագոյացումը մրցունակ կլիներ միջազգային շուկայի համար:

Փորձաքննություն

Ներկայիս արտադրական կարողությունները թույլ է տալիս ընդլայնել: Ոլորտում առկա փորձագետների առկայության դեպքում ավելի հեշտ կլինի նոր մեքենաների հետ աշխատելու համար վերապատրաստումը: